

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

195





# ՄԻՒՍԻ ՄԵԿ ԺԱՄՈՎ



Խ. Ա. Հ. Մ. ԳՈՎՈՎՈՒԹՅՈՒՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿՅԱՅԻՑ ՅՈՒՆԻ  
ՄԱՍՆԱԿԱՆ 1926

85  
\$-75

Лимонник (Лимонник) № 111-11, в = 18  
22. MAY 2011

30 MAY 2011

№ 10     ≡     ԽՈՐՀ ՐԴԱՅԻՆ ԳՊՐՈՑԻ ԴՐԱՇԱՔ     ≡     № 10

824  
S-75

1926-27

## ՖՐ. ՖՈԿՍ

۴۷۰

34

# ՄԻԱՅԻՍՏՐՈ

## ՄԵԿ

## ԺԱՄՈՎ

А Л звуковъ  
отъ

Центральное Издательство Народов Союза С. С. Р.  
Москва, Никольская, 10.

ԱԽՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1926

## ՄԻՆԻԱՏՈՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ

Կլիշեները տրամադրել ե Գ. Ֆ. ՄԻՐԻՄԱՆՈՎԻ հրատարակչությունը.

Առավոտյան ուղիղ ժամը 8-ն եր, յերբ մարդատար գնացքը 1891 թվի դեկտեմբերի 24-ին դուրս յեկավ Վեյվիլ փոքրիկ կայարանից։ Ճանապարհորդներից վոմանք վերադառնում էին Նյու-Յորք՝ իրենց տուն, վոմանք ել գնում եյին քաղաք՝ տոներին գնումներ անելու։ Այդ որը բոլոր գնացքներն ել լիքն եյին մարդկանցով ու բեռներով։

Անթափանցելի մառախուղն այնպես եր պատել կայարանը, մթնեցը բոլոր շենքերը, վոր ստիպված եյին լույսերը վառել։ Հեռագրասենյակում փոքրիկ լամպը հազիվ եր լուսավորում վառարանի շուրջը նստած մարդկանց դեմքերը։ Մարդատար գնացքի անցնելու ժամանակ փոքրիկ կայարաններում միշտ ժողովուրդ ե հավաքվում, և թեպետ որենքով չե թույլատրվում ժողովվել հեռագրասենյակում, այնուամենայնիվ մի քանի բախտավորներ այնտեղ ել են ընկնում։

Հեռագիրը անդադար չխկչխկում եր՝ ամեն կողմ ուրախ ու տիսուր լուրեր ուղարկելով։ Հեռագրող ֆրիդ կլարկը ձեռքը շարունակ հեռագրի վրա՝ ականջ եր գնում նրա չխ'չակոցին և ժամանակ առ ժամանակ վառարանի շուրջը նստածներին հաղորդակից անում հեռագրի բերած նորություններին։

— Ընդ, № 13 գնացքը 5 րոպեյով ուշանում ե, — արտասանեց նա, իսկ հետո հանկարծ ժպտաց և շարունակեց։ — Ճանապարհի պետը հենց նոր ե դուրս յեկել իր հատուկ գնացքով։ Ինչպես յերեսում ե՝ նա մենակ չե, վորովհետև 14 մարդու համար ճաշ ե պատվիրած։ Մեր կայարանով գնացքը կանցնի 9 ժ. 10 րոպեյին։

— Իսկ վո՞ր շոգեկառքն ե տանում այդ գնացքը, — հարցրեց



1197  
49.  
9/

Москва, 1926.

Տիраж 5000.

Արմանական պատճենաթուղթ 2.

վառարանի շուրջը նստածներից մեկը՝ Բոբ Թորդը:

— № 39:

— Այդ հենց այն շոգեկառքն ե, վորը վարում եր իմ հանգուցյալ հայրը, — մտախոհ արտասանեց մի ուրիշ՝ Թովմաս Մարտին խելացի, բարի աչքերով և յեռանդուն դեմքով 15 տարեկան մի պատանի, Նա առանձին ուշադրությամբ և մտախոհ հայացքով գիտում եր կրակը, Նրա հայրը 2 տարի սրանից առաջ վախճանվել ե կաղնի կամուրջի վրա՝ գնացքի խորտակման ժամանակ, իսկ մինչ այդ՝ նա յեր միշտ տանում յերկաթուղու վարչության հատուկ գնացքները:

— Այո՛, այո՛, ճիշտ ե, — նկատեց Բոբ Թորդը: Քանի՛ անգամ եմ յետ վասել ու տաքացրել այդ շոգեկառքը: Քո հայրը շատ քաջն եր և հրաշալի մեքենավար: Յիշում ես, Թովմաս, թե ինչպես դու նրա հետ յերբեմն ճամբորդում եյիր շոգեկառքի վրա:

— Ինչպէս չե, — պատասխանեց Թովմասը. — Կորս հետ յետ հաճախ եյի ճամբորդում, մինչև վոր շոգեկառքի վրա ինձ հաճախ ճանապարհի պետը: Դրանից հետո նա կարգադրեց, վոր նկատեց ճանապարհի պետը: Վայց և այնպիս այդ բոլորը իդուր չե անկառքով ճամբորդել: Բայց և այնպիս այդ բոլորը իդուր չե անցել. այժմ յետ ել կարող եմ շոգեկառք վարել: Հիշում ես, Բոբ, ինչպես եյի յերբեմն յետ ինքս վարում:

— Հիշում եմ, ճիշտում, Թովմաս, դու յե՛լ շատ զոչաղն եյիր, — պատասխանեց խոսակիցը: Այն ժամանակ դու բոլորովին յերեխս եյիր. յետ միշտ զարմանում եյի քո ճարպիկության վրա. աշխատում եյիր՝ իսկական մեքենավարի պես: Այո՛, դու մեքենավար պիտի լինեյիր. այդ գեպօրում դու շատերին գրալանդ կդնեյիր: Իսկ հիմա դու ի՞նչ ես անում:

— Հորս մահից հետո — ինչ պատահում ե՝ անում եմ: ԶԵ վոր յետ մայր ունեմ, վորին ոգնել ե հարկավոր: Ի միջի այլոց՝ Ֆրիդի մոտ սովորում եմ հեռագրային գործը, վորը հիմա արդեն դիտեմ:

— Իսկ ապրուստիդ հերի՞ք ե անում:

— Մի կերպ յոլա յե՞նք գնում:

— Ասում ես՝ հեռագրի հետ ծանրթ ես, — հարցրեց Բոբը. — Դեսա տեսնենք՝ եդ ի՞նչ ե չխկչխկացնում:

— Այս բոպեյիս Հայ-Ռիջից հեռագրողը հարցնում ե, թե արդյո՞ք № 14 գնացքը ժամանակի՞ն ե դուրս յեկել: Սպասիր, այս ի՞նչ ե, — հուզված արտասանեց Թովմասը: — Իսկվել կայարանից հեռագրում են՝ «№ 37 ապրանքատար գնացքը 3 մասի յե բաժանվել: Մեքենավարը, կարծելով թե գնացքը միայն մի տեղում ե կարվել և բաժանված մասը կանգ ե տոել, — շոգեկառքը հետ ե տալիս կտրված մասին միացնելու: Սաստիկ մառախուղ ե: Բաժանված գագոնները թռչում են շոգեկառքի վրա՝ մեքենավարին ու ննոցպանին դուրս շպրտում շոգեկառքից, վորը 3 վագոնի հետ միասին արագութելի արագությամբ ներքեւ ու ոլանում»: — Այս, ի՞նչ սարսափելի բան ե, — արտասանեց Թովմասը: — Սպասե՛ք, իսկ հետո: — Յերկըորդ վերստի յենթակայարանից են հեռագրում՝ «Այս բոպեյիս սարսափելի արագությամբ անցան անասուններով բեռնավորված տասը վագոն: Զեկ Ֆլինը գտնվում վերջին վագոնում: Յեթե հնարավոր ե, կանգնեցրեք վագոնները: Յեթե № 14 գնացքը գեռչի անցել, վրկեցրեք այն, շուտով փոխադրելով ուրիշ գծի վրա»:

Դրանից հետո հեռագիրը դադարեց գործել:

— Ճի՞շտ ե այդ, Ֆրիդի, — հուզմունքից շնչառպա՛ հարցրեց Բոբը հեռագրողին, — թե՝ Թովմասը մեզ հետ հանաք ե անում:

— Իհարկե, ճիշտ ե, — պատասխանեց հեռագրողը գունատված: — Այո՛, սարսափելի դժբախուություն ե պատահել. Բայց ի՞նչ անել, մենք ի՞նչ կարող ենք անել:

Այս հարցին վոչ վոք չպատասխանեց: Ծառայողների գժկույն դեմքերը ցույց եյին տալիս, վոր նրանք բոլորն ել լավ եյին գիտակցում ստեղծված գրության ամբողջ սարսափը:

Կայարանից հենց նոր դուրս յեկած № 14 մարդատար գնացքը, ժամը 45 վերստ կտրելով՝ հանգիստ առաջ եր գնում: Գնացքը լիքն եր ուղևորներով. իսկ այժմ նրա յետելից անասելի արագությամբ ու անում ե շոգեկառքը 3 վագոնի հետ միասին. Նրանք հիմա ժամը 90 վերստ են անում: Իսկ գնացքի այդ մասի յետելից վոչ պակաս արագությամբ ու անասուններով բեռնաված ուրիշ 10 վագոններ:

Թվում եր թե ուղերների փրկության հույս չկա, քանի վոր մյուս կողմից ել սրա հանդեպ եր գալիս ճանապարհի պետի գնացքը։ Փորձել ոլաքը թեքել և շոգեկառքը վագոնների հետ միասին ուրիշ գծի վրա փոխադրել, — միենույն ե, խորտակումը անխուսափելի յե մյուս՝ ճանապարհի պետի գնացքի համար, վորտեղ նույնպես ահագին ժողովուրդ կա։ Վոնց ուղում ես շուռ տուր, դժբախտությունն անխուսափելի յե։ Թերես ավելի լավ ե, վոր շոգեկառքը սլանա այդ ուղիւով, գուցե հրաշք պատահի, գուցե նա չհասնի մարդատար գնացքին։ Գուցե և մի կերպ հաջողվի նրան կանգնեցնել, բայց ինչպես։ Զարմանալի չե, վոր այդպիսի զրության մեջ բոլորն ել գույները գցել եյին։ Զարմանալի չե, վոր նույնիսկ ամենավճռական, ամենաքաջ անձնավորություններն անգամ վհատվել ու գլուխները կորցրել եյին։ Նրանք սաստիկ մտատանջության մեջ եյին ընկած։ Վախենում եյին շարժվել. սարսափը կաշկանդել եր բոլորին։ Շունչները կտրած՝ քարացել եյին։

Կերջապես այդ գերեզմանային լոռությունը խախտեց մի ձայնը բոլորն ել թեթևացած՝ շունչ քաշեցին։ Հասել եր այն վճռական բուպեն, յերբ միայն տաղանդը կարող եր ցույց տալ իր շնորհքը, յերբ սառնասրտությունն ու խելքը կարող եյին փրկել տասնյակ, հարյուրավոր կյանքեր։ Յեվ ամեն մեկն ագահությամբ սկսեց ականջ դնել այդ ձայնին։ Խեղղվողը ծղոտից ե բռնում։ Ամեն մեկն սպասում եր կարգադրության և պատրաստ եր առանց մտածելու կատարել այն բոլորը, ինչ կհրամայի այդ ձայնը։ Բոլորն ել լսողություն դառած՝ ականջ եյին դնում, թեպետ խոսողը վոչ միայն աչքի ընկնող մարդ չեր, նա նույնիսկ չափահաս ել չեր, այլ համարյա յերեխա։

Յեվ այդ՝ համարյա յերեխա թովմասն արտասանեց.

— Բոլորդ ել այս վայրկյանին վագեցեք՝ վորտեղ ինչքան յուղ, ձարալ գտնեք, շտապ բերեք և անմիջապես թափեցեք ուելաների վրա. այդ միքիչ կդանդաղեցնի շոգեկառքի ընթացքը, գոնե մի քիչ. բայց այդ ել բան ե. իսկ շոգեկառքը հենց վոր անցնի, կրկին առանց դադարի շարունակեցեք յուղել ուելաները. շտապեցեք, մենք պետք ե աղատենք դժբախտ Ֆլինի կյանքը, նմանապես և անառուններին։



Բոլորը վայրկենապես գուրս թռան գրասենյակից. ամենից  
առաջ Ֆրիդը և Բոբը:

— Այժմ պետք ե փրկել № 14 գնացքը, — խոսեց Թովմասը: —  
Պետք ե ազատել արևմայան գիծը և այդ գնացքն այնտեղ ուղղել:  
Նա ճարպիկորեն բռնեց հեռագրի բանալին և սկսեց չխչխկացնել:

— Վերնոն կայարանի հեռագրո՞ղ, ազդանշան տվեք ճանապարհի  
պետի գնացքին, կանգնեցրեք և կայարանում պահեք մինչև նոր  
կարգադրություն,

Խսկույն ապարատի վրա չխչխկաց պատասխանը.

— Ո՞վ կհամարձակվի կանգնեցնել ճանապարհի պետի գնաց-  
քը: Մենք հենց նոր ենք նրա համար ճանապարհը մաքրել: Ո՞ւմ  
կարգադրությամբ յե տրվելու կանգնեցնելու ազդանշանը:

Հիմա ժամանակը չեր յերկար ու բարակ բացարություն տա-  
լու, — յուրաքանչյուր վայրկյանը թանգ եր. և Թովմասը վայրկենա-  
պես չխչխկացրեց — «Շանապարհների հաղորդակցության մինիստրի  
կարգադրությամբ»: — «Լսում եմ, կատարված ե», — յեղավ պատա-  
խանը:

— Այժմ № 14-ը պետք ե ուղղել ուրիշ գծի վրա, վորն այժ  
ազատ ե ճանապարհի պետի գնացքից, — արտասանեց Թովմասը  
և կրկին մոտեցավ հեռագրին. «Հեռագրո՞ղ, ձեր կայարանում  
անմիջապես փոխեցեք ալաքի ուղղությունը և № 14 գնացքը արե-  
մայան գծից փոխադրեք արևելյան գծի վրա, և գնացքը պահեք  
ձեզ մոտ՝ մինչև նոր կարգադրություն»:

Նորից լսվեց հեռագրի պատասխան չխչխկոցը: Այդ կարգադրու-  
թյունն արդեն բոլորովին խելացնոր թվաց.

«Այդ ճանապարհը մաքրված ե ճանապարհի պետի հատուկ  
գնացքի համար, վոր շուտով դուրս ե գալու Վերնոն կայարանից.  
այդ առթիվ մենք ճշգրիտ կարգադրություններ ունենք: Բացա-  
դրեցեք ձեր հրամանը. ով ե կարգադրում»:

«Ճանապարհների հաղորդակցության մինիստրը կարիք չի զգում,  
վոր մի ուրիշը հաստատի նրա հրամանները: Անմիջապես կատարե՛լ.  
չափազանց կարեոր ե»:

«Լսում եմ, կատարված ե», — յեղավ պատասխանը:



— Իսկ հիմա, — ինքն իրեն ասաց Թովմասը, — յեթե միայն ինձ հաջողվի կանգնեցնել շոգեկառքը, մինչև վոր կարողանան № 14 գնացքը ուղղել ուրիշ գծի վրա, յեթե միայն... և այդ դեպքում ամեն բան լավ կլինի: Իսկ անասունները — կորած են. յերեխ արդեն անհնար են նրանց ազատել: Հիմա կտեսնենք. — № 14-ն այստեղից դուրս են յեկել 15 բոպե սրանից առաջ. Լյուվիստոնում նա պետք է լինի 30 բոպեյից հետո: Բաժանված շոգեկառքն այստեղ կլինի 5 բոպեյից հետո՝ յեթե միայն չպակասեցնի իր արագությունը, ԱՌ դժբախտություն. Ճե վոր նա կարող է մարդատար գնացքին հասնել Շ վերստի վրա: Բայդ դեռ հույս կա, պետք են փորձել:

Այդ ժամանակ սանդուխքներով ցած եր իջնում տոմսավաճառը, վորին զրավել եր կայարանի հանկարծակի աղմուկն ու հուզումը: Նա հարցրեց Թովմասին, թե ի՞նչ են պատահել: Թովմասն արագ հաղորդեց նրան բանի Եյությունը և վերջն ել ասաց.

— Ընկեր Լենոքս, յես ցանկանում եմ՝ յեթե հնարավոր լինի՝ ցատկել անցնող շոգեկառքի վրա և նրան ճանապարհին կանգնեցնել:

— Ի՞նչ եք ասում, Թովմաս, գժվե՞լ եք՝ ի՞նչ ե, — անհանգատացավ տոմսավաճառը: Ի՞նչպե՞ս կարելի յե այդ. Հե՞ վոր դա ինքնասպանություն ե: Յեթե նույնիսկ ձեզ հաջողվի ճանապարհին շոգեկառքը կանգնեցնել, Հե՞ վոր նրա յետելից սլանում են ելի 10 վագոններ. Նրանք կթոշեն շոգեկառքի վրա, և ձեր մեծ կտորն ականջդ կմնա: Իսկ յեթե դուք չկարողանաք շոգեկառքը կանգնեցնել, կընդհարվեք մարդատար գնացքի հետ — այստեղ ևս՝ մահ ե: Նայեցեք՝ ինչպիսի մառախուղ ե: Յեթե նույնիսկ կարողանաք դեկավարել շոգեկառքը, վոր չափաղանց կասկածելի յե, մեկ ե, դուք ձեր առաջ Հեք կարող նշմարել մարդատար գնացքը: Հասկացեք, վոր այստեղ յուրաքանչյուր վայրկյանը ահազին նշանակություն ունի: Այսպիսի մառախուղում դուք Հեք կարող նկատել վրա հասնող գնացքը, Ախր մտածեցեք, Հե՞ վոր դուք ձեր մոր միակ նեցուկն եք: Ասենք, ձեզ յերբեք չի հաջողվի ցատկել շոգեկառքի վրա. դուք անիվսերի տակը կընկնեք ու տեղն ու տեղը կսպանեք: Յեկ վոչ վոք, իհարկե, չի համաձայնվի թուչել այդպիսի

սարսափելի արագությամբ սլացող շոգեկառքի վրա: Զե՞ վոր դա ինքնասպանություն ե, ինքնասպանությունից ել վատ ե: Բացի այդ, շոգեկառքն ել կարող ե պայթել: Վո՞չ, վո՞չ, այդ մասին մռացեք:

— Գուցե և դուք ճշմարիտ եք, ընկեր Լենոքս, բայց և այնպես յես պարտավոր եմ փորձելու: Այստեղ, ուր այդքան կյանքեր են կորչում, ի՞նչ արժի մի մարդու կյանքը՝ յեթե միայն սա գունե մի փոքր հույս ունի վրկելու նրանց: Վո՞չ, յես պարտավոր եմ անել այն ամենը, ինչ վոր կարող եմ: Մնա՞ք բարե, յես անմիջապես պետք են անցնեմ պլատֆորմ, թե չե՞ կարող եմ ուշանալ:

— Ե՞ն, հաջողություն, — պատասխանեց Լենոքսը, տղայի վճռականությունից շշմած:

— Դուրս գալուց առաջ՝ Թովմասը հանեց իր վերարկուն ու բաճկոնը, պնդացրեց գոտին և պատրաստվեց մահացու թռիչքին: Նա դուրս յեկավ պլատֆորմ և նկատեց, վոր մի քանի հարյուր քայլի վրա ուելսները լավ յուղած են: Այստեղ խոնված մարդկանց նա վոչինչ չասաց իր մտագրության մասին, վախենալով վոր նրանք զոռով կարող են արգելել ու խանգարել կատարելու իր ծրագիրը: Բայց և այնպես նա կարողացավ գոչել Բորին.

— Հենց վոր շոգեկառքն անցնի, հավաքիր բոլորին, վորաեղից հնարավոր ե՝ ճարեցեք յուղ, ճարպ, յուղեք ուելսները և նետեվեցեք, վոր գծի վրա վոչ մի արգելք չլինի, թե չե սարսափելի գժբախտություն կարող ե պատահել — կսպանվի գժբախտ Զեկ Ֆլինը, կվոչնչանան անասունները: Ոոկվիլում նկատել են, վոր Ֆլինը վերջին վագոնի վրա յե: Խեղճը չի համարձակվի ներքեւ ցատկել, քանի դեռ վագոնները սլանում են այդպիսի արագությամբ. յեթե նա այդպիսի քայլ անի — հավասար ե մահվան: Ահա, ահա շոհեկառքը. յես արգեն լսում եմ նրա ձայնը. վազեմ պլատֆորմի մյուս ծայրը՝ նրան հանդիպելու:

Շառաչող շոգեկառքի ձայնն արդեն հեռվից լսվում եր, թեպետ մառախուղի մեջ վոչինչ Հերեում: Թովմասը վազեց կայարանի հակառակ կողմը, վորաեղից սկսել ելին ուելսները յուղել. այստեղ նա պետք են շոգեկառքին հանդիպել այն վայրկյա-

նին, յերբ յուղի շնորհիվ նրա արագությունը մի քիչ պակասած պիտի լիներ։ Ահա այն մարդիկ, վոր յուղ եյին լեցնում, փախան զանազան կողմեր։ Յերբ ֆնչացող հակա շոգեկառքն անցավ յուղած ոելսների վրա, ամբողջովին ցնցվեց, անիվերը իւլահեղ արագությամբ պտտվեցին՝ ոելսների վրա դժվարությամբ առաջ գնալով։ Սլացող շոգեկառքի թափն այնքան ուժեղ եր, վոր դանդաղումը հազիվ եր նկատելի. բայց յուղոտ ոելսների վրայով վորքան առաջ եր գնում, այնքան ավելի ու ավելի յեր դանդաղում։ Թովմասն ուրախությամբ հետևում եր ընթացքին։


Բայց ահա շոգեկառքն արագ թոշում ե դեպի նա։ Թովմասը շուռ յեկավ և վորքան ուժ ուներ՝ վազեց շոգեկառքի ուղղությամբ։ Շոգեկառքը հասավ նրան։ Թովմասը հենց վոր հավասարվեց շոգեկառքին, թուավ, ձեռքերով կպավ շոգեկառքի սանդուխքից և կախ ընկավ աստիճանների վրա։ Անցան մի քանի տանջալի վայրկյաններ, մինչև վոր թովմասն իրեն հավաքեց, վորքերը դրեց աստիճաններին և սկսեց բարձրանալ։ Նրա դեմքը քաթանի պես գունատ եր. յեվ յերբ վերջապես շոգեկառքի մեջ ընկավ՝ չնայած սաստիկ սառնամանիքին՝ քրտինքի մեջ կորած եր։

Թովմասն իսկույն դիտեց մանումետրը\*) և տեսավ, վոր կաթսայում շատ քիչ շոգի յե մնացել։ Նա սարսափով նկատեց, վոր շոգեկառքը ալանում ե միայն ստացած թափի շնորհիվ։ Նա փակեց տորմուզը։

Տորմուզը թույլ եր աշխատում, բայց և այնպես ազդեց շոգեկառքի ընթացքի վրա։ Այն ժամանակ թովմասը վորոշեց, վոր շոգեկառքին միանգումայն տիրապետելու համար հարկավոր ե ըստ կարելույն շատ շոգի ստանալ։

Թովմասը նայեց ջրաչափ ապակուն. բավականաչափ ջուր կար, իսկ նրա պես առողջ և ուժեղ տղայի համար հնոցն ածուխ լցնելը մի բողերի գործ եր։ Շուտով նա մեծ բավականությամբ և ուրախությամբ նկատեց, վոր շոգին զգալի կերպով ավելացավ։

Այժմ վախենալու մասին նա իսկի չեր ել մտածում, թեպետ զգում եր, վոր գտնվում ե յերկու կրակի միջև. այդ—վոչ մի վայրկյան չեր մոռանում, նա հասկանում եր, վոր պետք ե այնպիսի



\*) Շոգիի ուժը չափող գործիք։

արագությամբ ընթանալ, վոր չընդհարվի առաջից մեկնող մարդա-  
տար գնացքի հետ. բայց չեր մոռանում նաև այն, վոր փախչել պետք  
եր նաև յետեկից հասնող վագոններից: Անհանգիստ հայացքով աշխա-  
տում եր թափանցել շրջապատող մառախուղը, բայց նրա դիմաց  
վոչինչ չեր յերեռմ, չեր լսվում նույնպես հասնող վագոնների  
աղմուկը:

Իսկ մանումետրի գոլորշին բարձրանում եր. ահա արդեն 20  
ֆունտ ավելացել եւ, Յեվ նա թեթևացած՝ շունչ քաշեց, տեսնելով,  
վոր այժմ դրության տերն եւ և կարող եւ ավելի արագ գնալ, կա-  
րող եւ հարկ յեղած բռպեցին իսկույն կանգնեցնել այժմ իրեն հնա-  
զանդ մեքենան:


Առայժմ նա համարյա չեր ոգտվում շոգիյով, բացի տորմուզը  
փորձելու դեպքերից: Նա լծակը մի աստիճան բարձրացրեց, տոր-  
մուզը փորձեց և իսկույն նկատեց, վոր շոգեկառքը դանդաղեցրեց  
իր վազքը: Ուռուա, այժմ նա միանգամայն տիրապետում եւ շոգե-  
կառքին: Այժմ թովմասը կարող եւ հարկադրել նրան կատարելու  
ամենը, ինչ վոր ուզի: Բայց ինչպես եր նա սլանում. ինչպես եր  
թռչում կամուրջների վրայով, պտույտներով. մարդու շունչը  
բռնվում եր: Իսկ քամին ուղղակի մարդու յերես եր պոկում:

Նորից նա լծակը ևս մի աստիճան բարձրացրեց. շոգեկառքի  
թոփչը միանգամայն նկատելի կերպով դանդաղեց:

«Լծակը միանգամից հակառակ կողմը շուռ տալով, յես այժմ  
նրան իսկույն կարող եմ կանգնեցնել,—դատում եր թովմասը,—  
բայց զա գուցե ավելի վատ լինի»... Հետո նա նայեց ժամացույ-  
ցին, — «Ինգ բռպեցից հետո № 14 գնացքը կանցնի ուրիշ գծի վրա,  
և սլաքին նորից նախկին դիրքը կտան: Ախ, միայն թե կարելի լի-  
նի 5 բռպե պահել: Փորձեմ ավելի դանդաղ գնալ»... և նա սկսեց  
դանդաղեցնել:

Մեքենան իսկույն հնագանդվեց նրան. այժմ նա ժամը վաթ-  
սուն վերստ եր կտրում: Թովմասը զլուխը պատուհանից գուրս հա-  
նած տանջանքով դիտում եր մառախուղը: «Բո՞ւմ», — լսեց նա հը-  
թիոի պայմանը:

«Այդ № 14 գնացքն են կանգնեցնում սլաքի առաջ», — գլխի ըն-



կավ թովմասը: «Բուռմ, բուռմ», — նորից լովեցին հրթիռի պայթյունները: — «Դանդաղացրո՛ւ ընթացքը, զգուշ յեղիք», — թարգմանում եր թովմասը հրթիռների լեզուն:

Բայց հանկարծ նրա ուշադրությունը գրավեց յետերց լովող ողբերունը:

«Այդ՝ իմ յետերց սլացող վագոններն են», — մտածեց թովմասը: «Սկսվում ե: Այս, զոնե մի բոպէ ես, և ամեն բան փրկված ե, միայն մի բոպէ ես»:

Թովմասը շարժեց լծակի կոթը և շոգեկառքին լրիվ ընթացք տվեց. շոգեկառքը առաջ ցատկեց: Թովմասի առաջ վայլեց մարդատար գնացքի վերջին վագոնի կարմիր լապտերը, իսկ յետերց՝ ավելի ու ավելի մոտ եր լովում համառող վագոնների դղրդյունը. Նա այլս չեր համարձակվում յետ նայել: Ո՛, բախտավորություն. առաջի կարմիր լույսը դեպի ձախ թեքվեց: Արդյո՞ք այժմ ժամանակ կունենա՞ն սլաքի ուղղությունը կրկին փոխել: Ամեն բան այժմ կախված ե դրանից: Թովմասը ամբողջովին տարվել եր այդ առնջալի հարցով: Նրա շոգեկառքը թռավ սլաքի վրայով այն բոպեյին, յերբ պատրաստվում եյին սլաքին նորից առաջվա ուղղությունը տալ:

— Այժմ մարդատար գնացքը անվտանգ ե՝ յեթե միայն իմ բոլոր հրամանները կատարված են: Այժմ պետք ե իմ, խեղճ Ֆլինի յեկ վագոնների վրա գոնված անառունների փրկության մասին մտածել: Դե, այժմ ամբողջ թափով: Յես պետք ե հաղթեմ:

Այժմ նրա առաջ ընկած եր 18 վերստ ճանապարհ առանց պըտույտների: Սկզբում շտրունակվում եր թեթև վայրեջք, ապա մեկ ու կես վերստ հարթ ճանապարհ, իսկ այսուհետեւ դեպի վերնոն կայարանը՝ վեց վերստ վերելք:

Թովմասը հնոցը բացեց, թիակը ձեռքին արագ շարժելով սկսեց շոգեկառքի բաց յերախը ածուխ լցնել: Նա դիտմամբ չեր ծածկում հնոցի դռնակը, վորպեսզի ավելի ուժեղ գառվի: Հետո նա մաղլցեց տեսնդերի վրա նայելու, թե վորքան հեռու յեն յետերց յեկող վագոնները: Կայարանից ընկնող լույսի չորհիվ նա նկատեց, վոր յետերց յեկող գնացքը քառասուն քայլի վրա յե:

«Այո, այո, պետք ե շոգին ավելացնել, և վորքան հնարավոր ե՝ արագ սլանալ», — մտածում եր նա:

Նա ամբողջ թափով բաց թողեց շոգեկառքը:

Շոգեկառքը մի բոպեյում անցնում եր մեկ ու կես վերստ, գուցե և ավելի: Պետք եր կրակը վառ պահել. և թովմասն այլես լուսամուտից դուրս չեր նայում, նա ամբողջովին տարված եր ածուխ լցնելով: Անցավ 10 բոպե: Հարթ ճանապարհն արդեն անցել եր, սկսվում եր վերելքը: Ելի, ելի ածուխ: Թիակը արագորեն շարժվում եր թովմասի ուժեղ ձեռքերում՝ կաթսայի պատերը լիզող հրեղեն լեզուներով հագեցնելով շոգեկառքի վորովայնը: Յերբ շոգեկառքը սկսեց բարձրանալ վերելքը, վագոնները միայն 7-8 սաժեն եյին հեռու: Շոգեկառքն անցավ ելի մեկ ու կես վերստ, և թովմասը նկատեց, վոր իր և վագոնների միջի տարածությունն սկսում ե մեծանալ: Այդ ժամանակ միայն թովմասը ծածկեց հնոցի դռնակները, լծակը շրջեց, գանդաղեցրեց ընթացքը, կրկին փորձեց տորմուզը, և յերեք բոպեյից հետո հասավ վերնոն կայարանը ու սկսեց կանգնեցնել շոգեկառքը: Յերբ նա կանգ առաջ կայարանի մոտ, շունչ քաշեց և գլուխը շոգեկառքից դուրս հանելով՝ գոչեց հեռագրողին.

— Անմիջապես հեռագրեցեք Վեյվիլ կայարան, վոր և 303 շոգեկառքը բարեհաջող հասել ե ձեզ մոտ, և թովմասը վողջ ու անմնաս ե:

Ճանապարհի պետի գնացքը շրջապատած ամբոխը դարմացած նայում եր մխացող և շոգի արձակող շոգեկառքի վրա կանգնած պատանի մեքենավարին: Այդ բանը ճանապարհի պետին դուր չեկավ:

— Եյ, յերիտասարդ, — գոչեց ճանապարհի պետը, տեսնելով թովմասին շոգեկառքի վրա: — Ի՞նչ գործ ունեք դուք այստեղ շոգեկառքի վրա: Միթե դուք չգիտեք, վոր կողմնակի անձանց արգելված ե բարձրանալ շոգեկառքի վրա: Իսկ վորտեղ են մեքենավարը և հնոցպանը: Լավ, նրանք այս բոպեյից պաշտոնից արձակված են համարվում: Հեռացե՛ք իսկույն շոգեկառքից: Եղ վո՞րտեղից եք բերում շոգեկառքը, — շարունակում եր նա գոռալ, ավելի ու ավելի զայրանալով:

Թովմասը հնարավորություն չուներ պատասխանելու բառերի այդ հեղեղին. նա աեղից չեր շարժվում:



— Յես ձեզ ցույց կտամ՝ ի՞նչ ե նշանակում գժություն անել,  
— զայրույթից իրեն կորցրած՝ գոռում եր ճանապարհի պետը: — Լսեց եք, — դիմեց նա վոստիկանին, — յես ձեզ խնդրում եմ անմիջապես ձերբակալել այս յերիտասարդին, վորովհետև նա ճանապարհի վարչությունից շողեկառքը գողացել ե: Իջեցրեք նրան շողեկառքից, — կանչեցնա վոստիկանին: — Շողեկառքը վողորմելի տեսքունի... այս «քաջն» անպայման փչացրել ե մեքենան:

Թովմասը վերջապես սթափվեց քարացած դրությունից: Նրա աչքերը զայրույթից փայլատակեցին:

— Զհամարձակվեք ինձ ձեռք տալ, — գոչեց նա: Յես ինքս կիջնեմ շողեկառքից: Յես միայն մի քանի խոսք ունեմ ասելու ճանապարհի պետ Հոլմսին: — Յեվնա մոտեցավ ճանապարհի սլետին ու ասաց. — յես չեմ գողացել ձեր շողեկառքը, յես...

— Յես չեմ ցանկանում ձեզ հետ խոսել, — գոռաց Հոլմսը:

— Յես ել չեյի ցանկանալ ձեզ հետ խոսել բայց և այնպես պետք ե ձեզ ասեմ, վոր լավ կանեյիք, յեթե իսկույն և յեթ շողեկառք ուղարկեյիք և իմանայիք, թե ի՞նչ դրության մեջ ե դժբախտ Ձեկ Ֆլինը: Ասում են՝ նա գտնվում է իրարից բաժանված № 37 գնացքի վերջին վագոնում:

— Ի՞նչ եք դուրս տալիս. գնացքը բաժանվել ե. ինչպես. վորտեղ ե այդ պատահել, — վրա տվեց Հոլմսը, ձայնը իսկույն փոխելով:

— Այդ՝ կենտվալում ե պատահել: Զարիվայրում գնացքը բաժանվում ե յերկու մասի. վերջին վագոնները զարնվում են շողեկառքին և դուրս շպրտում մեքենավարին ու հնոցպանին. այնուհետև թե շողեկառքը և թե վագոններն առաջ են սլանում: Յես թուա շողեկառքի վրա՝ յերբ նա անցնում եր Վեյվել կայարանից, և բերի այստեղ: Գնացքի մյուս մասը՝ գտնվում ե յետեսում, յերեկ այստեղից յերեք վերստի վրա՝ յեթե նորից զառիվայրով յետ չեն գլորվել:

— Լավ պատմություն ե... իսկ ինչպես եք դուք անցել № 14, գնացքի կողքով, — մի քանի վայրկյան կենտրոնացած մտածելուց հետո՝ խստությամբ հարցրեց ճանապարհի պետը:

— № 14 գնացքը փոխադրված ե ուրիշ գծի վրա, — պատասխանեց Թովմասը:

— Ասացեք իսկույն իմ շողեկառքի մեքենավարին և հնոցպանին, վոր նրանք անմիջապես բարձրանան այս շողեկառքը: Մենք յետ կզնանք տեսնելու, թե ի՞նչ ե պատահել, — հրամայեց ճանապարհի պետը կոնդուկտորին. — իսկ դուք առայժմ ազատ արձակեցեք այս յերիտասարդին, — դիմեց նա վոստիկանին: — Յես նրան ինձ հետ շողեկառք կվերցնեմ: Յեթե նրա պատմածը ուղիղ ե, այդ դեպքում նրան կարելի յե ազատ թողնել՝ ուր քեֆը տա, իսկ յեթե խաբել ե, վայ իրեն:

Մեքենավարն ու հնոցպանն իսկույն մոտեցան շողեկառքին, յուղեցին, նայեցին և դտան, վոր Թովմասը ամեն բան կարգին և թողել և վոր կատաղի ընթացքն ամենակին չի ազդել մեքենայի վրա:

Շողեկառքով առաջ գնալով, անցան յերեք վերստ և նկատեցին մեկին, վորը հարբածի պես քայլում եր ճանապարհի մոտ: Յերբ շողեկառքը մոտեցավ նրան, Թովմասը գոչեց.

— Այդ՝ Ձեկ Ֆլինն ե, նա կարծես անվաս ե:

Այո՛, այդ՝ Ֆլինն եր. նա որորվում եր հարբածի նման և նայում խելագարի հայացքով: Յերեկի վոչ վոք իր կյանքում գնացքով այնպես արագ չե սլացել, ինչպես այդ խեղճը: Նա պատմեց, թե ինչպես ե գնացքը բաժանվել յերեք մասի, — յերկաթուղային պատմության մեջ չլսված դիպված: Նա մենակ գտնվելիս ե յեղել գնացքի մեջտեղը. փորձել ե կանգնեցնել, բայց գնացքի այդ մասը ընդհարվում ե առաջին մասի հետ. նա շպըրտվում ե վագոնի կտուրը, բայց ինքն իրեն չի կորցնում և մի կերպ կպչում ե այդտեղին: Այնուհետև փորձում ե անցնել վերջին վագոնի վրա և այնտեղից ներքե թոչել, բայց գնացքը սլանալիս ե լինում այնպիսի արագությամբ, վոր այդպիսի թոփչքը նրա համար մահցու կլիներ: Նա կպել եր վերջին վագոնին և ըռպե առ ըռպե մահվան եր սպասում: Բայց ահա անցնում են մեկ, մյուս կայարանը — գնացքը բարձրանում ե վերելքով, արագությունն սկսում ե պակասել և վերջապես սկսում ե այնպես դանդաղ գնալ, վոր նա ինքն իրեն հավաքելով՝ մոտենում ե տորմուղներին և

սկսում դանդաղեցնել վագոնների ընթացքը. գնացքը վերջապես կանգ ե առնում. այդ ժամանակ նա վերջին վագոնից ներքե ե ե ցատկում, վերցնում ե ճանապարհի մոտ ընկած շպալը և դնում վագոնի անիբների տակ, վորպեսզի նորից յետ չգլորվեն դեպի ցած:

— Դուք այժմ կարող եք հանգստանալ և մինչև նոր տարին աշխատանքի չգնալ, — ասաց Հոլմսը, Ֆլինի պատմությունը լսելուց հետո:

Այդ ըովեյին շոգեկառքը միացրին անտառներով բեռնափորված վագոններին և մի քանի րոպեյից հետո այդ չարաբաստիկ դնացքը բերին Վերնոն կայարանը:

Իսկ վոստիկանն այդ ժամանակ մտածում եր՝ հարկավոր ե արդյոք թովմասի ձեռքերը շղթայել, թե՞ կարելի ե և առանց շըղթաների:

— Իսկ դուք կարող եք այդ յերիտասարդին արձակել, — խըստությամբ ասաց Նըման Հոլմսը: — Ինչպէս ե ձեր անունը, — դիմեց նա թովմասին:

— Յես՝ թովմաս Մարտինի տղան եմ, — պատասխանեց թովմասը: Գուցե հիշեք. դա այն մեքենեվարն ե, վորը ձեր գնացքի շոգեկառքն եր վարում:

— Ա՛ա... ահա թե ինչու ինձ թվաց՝ վոր յետ ձեզ առաջ մի տեղ տեսած եմ: Դե, հիմա անցեք իմ վագոնը և տաքացեք: Այդ ի՞նչ ե, դուք այսպիսի սարսափելի ցրտին առանց բաճկոնի և վերակուի՞ յեք: Մերի՛, — դիմեց նա իր հետ ճանապարհորդող աղջկան, — իմ տաք վերարկուն բեր ու զցիր այս յերիտասարդի ուսերին, և հոգ տար նրա մասին, տաք տեղ տար, տեսնում ես՝ նա բոլորովին փետացել ե:

Թովմասը յերիտասարդ աղջկա ուղեկցությամբ մտավ ճանապարհի պետի հոյակապ վագոնը. շուտով նա իրեն լավ դգաց՝ փաթաթվելով Հոլմսի լայն ու տաք վերարկուի մեջ:

Հոլմսը դիմեց հեռագրատուն և կարգադրեց, վոր կանգնեցրած մարդատար գնացքը նորից ուղեվորեն ըստ պատկանելույն:

Նա ապարատի միջոցով հարցրեց Վեյվիլի հեռագրողին, թե ո՞վ ե այդ կայարանից կարգադրել՝ կանգնեցնելու ճանապարհի պե-

տի գնացքը, և ո՞ւմ հրամանով ե այդ արված: Հեռագրողը բացարեց, վոր այդ ժամանակ ինքը յուղում եր ոելուները և վոչինչ



չիտի: Միայն մեկը կարող եր անել այդ բանը, դա՝ թովմասն եր վորը վերջինն ե դուրս յեկել հեռագրատնից և վորին մինչև հիմա կայարանոոմ չեն կարողանում գտնել:

— Տարորինակ ե, չափազանց տարորինակ,—վինթվինթաց Հոլմսը վագոն մտնելով և առաջ գնալու կարգադրություն անելով։ Հոլմսը ազնիվ, խիստ մարդ եր և իր վորոշումներում՝ անհողդող։

Յեթե նա նկատում եր իր սխալը, առանց մի վայրկյան տատանվելու՝ ուղղում եր այն։ Նա իր ստորադրյալների նկատմամբ չափաղանց խիստ եր, բայց այդ խստության ու պահանջկոտության հետ միասին նա միևնույն ժամանակ չափաղանց արդարացի յեր, վորի համար և բոլորը նրան հարգում եյին։ Վագոն մտնելով, նա նստեց թովմասի կողքին և խոսեց այժմ արդեն ուրիշ ձայնով։

— Շատ լավ, շատ լավ, քաջ յերիտասարդ։ Հը՛, ինչպե՞ս եք ձեզ զգում։ Վ՞ո՞ կայարանում կցանկանայիք իշնել։

— Ծնորակալեմ. յես ինձ հրաշալի յեմ զգում։ Յես կցանկանայի իշնել վեյզիլ կայարանում։ Յերեկ այժմ կայարանում բավականաշափ ծրաբներ են հավաքվել, և յես մինչև յերեկո պետք եք աղաղաքում ցրեմ։

— Ժորժ, — զիմեց Հոլմսը իր վորդուն՝ այդ կայարանի պետին, չե՞ս հիշում, թե այսոր վորտե՞ղ ե գտնվում ճանապարհների հաղորդակցության մինիստրուլը։

— Կարծեմ նյու. Ցորքումն ե.

— Յես ել եմ այդպես կարծում։ Բայց այդ դեպքում յես բոլ ըովին չեմ հասկանում, թե ով կարող եր այդպիսի կարգադրությունուր անել։ Այս ասելով՝ Հոլմսը վորդու ձեռքը տվեց մի ժամ առաջ վեյզիլ կայարանից ստացած հեռագրերի պատճեն։ Թովմասը կարմըց. բայց վոչ մի բառ չարտասանեց։

— Այդ հեռուրիքը Վելիկից ուղարկել ե այնպիսի անձնավորություն, վորը. յերեկ, չափաղանց լավ ե տեղյակ մեր գործերին և զի ե ոչ անց իր իւգ մասի պես։ Յես կարծում եմ, վորնույնիսկ դու դրանից տվելի լավ կարգադրություն անել չեյիր կարող։ Վեյզիլ կայարանում յես վոչ վոքի չեմ ճանաչում, վորը կարողանար այդպիսի խելացի կարգադրություններ անել։

— Իսկ դու քչե՞ք ճանաչում, — զիմեց ներկա յեղողներից մեկը թովմասի։

— Յես դրանում առանձին վոչինչ չեմ գտնում։ Ինձ թվում

ե, վոր ամեն խելքը գլխին մարդ կարող եր այդ անել, — պատասխանեց թովմասը։

— Ուրեմն այդ դուք եք արել, — հանկարծ հարցրեց նրան ճանապարհի պետը։

— Այո, այդ յես եմ արել։

— Դուք եք ուղարկել այս հեռագիրը։

— Այո, յես։

— Ուրեմն դուք վոչ միայն հնոցպան, մեքենավար եք, այլ նաև հեռագրող, կայարանի պետ, — ինչ եմ ասում, — շատ ավելին քան կայարանի պետը…

— Մինիստր մեկ ժամով, — լրացրեց Հոլմսի աղջիկը։

— Ճշմարիտ ե, յես դրանում մեղավոր եմ, յես մինիստրի անունից եմ կարգադրություններ արել, — գլուխը կախեց թովմասը։

— Բայց ինչպես եք համարձակվել այդ անել, — հարցրեց Հոլմսը։

— Յես պատրաստ եյի ամեն բան անելու, միայն թե փրկեյի մարդկանց կյանքը։ Յեթե վոչ վոք չհամարձակվեր, յերեակայում եք թե ինչ կարող եր պատահել։ Միայն այդ եր մնում անել, և յես այդ արեցի։

— Դուք ծառայում եք յերկաթուղու վրա։

— Վո՞չ։

— Իսկ կուզեյիք ծառայել։

— Իհարկե։

— Ժորժ, զրիր, վոր թովմաս Մարտինը նշանակվում ե ճանապարհի պետի զրաբենյակի գործավար։ Նշանակվում ե դեկտեմբերի 1-ից և ոռնիկն ել այդ որվանից պետք ստանա, իսկ ծառայության պետք ե գա հունվարի 2-ից։

— Ծնորհակալ եմ, — արտասանեց թովմասը։

Յերբ գնացքը կանգ առավ վեյզիլ կայարանում, պլատֆորմի վրա ահագին ժողովուրդ եր հավաքված։ Բոլորն ել հեռագրողից արդեն իմացել եյին թովմասի քաջազործության մասին։ Հենց վոր թովմասը դուրս յեկավ ճանապարհի պետի վագոնից, բոլորն ել սկսեցին ուռուա կանչել, ծափահարելով ու վողջունելով թովմասին։

իոկ թովմասը իսկույն ժողովեց հավաքված ծրաբներն ու հեռագրները, վոր հարկավոր եր քաղաքում ցրել, և գնաց կատարելու իր պարտականությունները, կարծես արտակարգ վոչինչ չեր պատահել, Յեվ իսկապես նա համարում եր, վոր դրանում առանձին բան չկա: Նրա կարծիքով, իր տեղ ով ել լիներ, նույնը կաներ:

Ճանապարհի պետը ևնրա ուղեկիցները դուրս յեկան վագոնից, խառնվեցին ամբոխին և շուտով բոլորը իմացան, թե ինչպես ե թովմասն յերեք գնացքն ել աղատել. այստեղ ել իմացան թովմասի կյանքից զանազան մանրամասնություններ:

Տոմսավաճառը պատմեց Հոլմսին, թե ինչպես թովմասը վերջինը պեյին նրան հայտնեց իր մտադրության մասին, նա պատմեց թովմասի վճռականության մասին: Այս պատմելիս՝ նրանք յերկուսն ել արտասվեցին:

— Այդ յես հասկանում եմ. փրկել հարյուրավոր կյանքեր՝ չնորհիվ իր խելքի, սառնասրտության և վոր գլխավորն ե, չնորհիվ ազնիվ սրտի: Այս, անվախ սիրտ, ազնիվ բնավորություն, ավելին՝ հերոսական բնավորություն. չի խուսափել նույնիսկ իր կյանքը զոհելուց: Նա ինձ չափազանց դուր ե գալիս: Նրանից մարդ դուրս կգա, — արագ ու ընդհատ խոսում եր ճանապարհի պետը:

Շուտով վեյվիլ կայարանից մեկնեց ճանապարհի պետի զնացքը: Սակայն հավաքված ամբոխը, մանավանդ յերկաթուղու ծառայողները չեյին ցրվում ե, թովմասի հերոսական քայլով զմայլված, շարունակում եյին նրան ցույցեր սարքել:

Այդ որը թովմասի կյանքում ամենայերջանիկ որերից մեկն եր. նա իրեն բախտավոր եր զգում, յերբ մտածում եր, թե ինչպես իր շնորհիվ փրկվեցին գնացքներն ու հարյուրավոր մարդիկ:

ՎԵՐՋ



Խ. Ա. Հ. Մ. ԺՈՎՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԵՆՏ. ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԼԵԿԵԴԱՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԼԵՆԻՆ. — Պատգամներ յերիտասարդության.

ՍՈՅԻՆ Ա. Ա. ԿԱԿԱՆ Շ. Ա. Բ. Ք.

Լույս են տեսել.

ՍՏԱԼԻՆ. — Գյուղացիական հարց.

Ն. ԵԼԻԶԱՐՈՎ. — Ի՞նչ վորոշեց կուսակց. XIV համագումարը:

ԿՐԱՐԱ ՑԵՏԻՆ. — (կենսագրությունը).

ԳՅՈՒԿԱ Ա. Յ. ԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԼԻՎԻՆՍԿԻ. — Գյուղատնտեսական հարկ.

ՊՈՒՅԱՊՈԼՍԿԻ. — Աստծու կամքը թե՞ գյուղատն. գիտությունը.

ՅԱԶՎԻՑԻ. — Մարդկային բնակարանի պատմությունը.

ՎԱԼՍՈՎ. — Հողի մշակումը յերաշտի ժամանակ.

ԴՄԻՏՐՅԵՎ. — Տգիտությունը և մնանավատությունը.

ԳՈՒԳԼԻՆ. — Փորող փայտից մինչև տրակտոր:

Լ. ԻՅՈԶԵՖՅՈՂԵԶ. — Գեղ կանգնի գերան կկոտրի (կոռպեր, մասին).

ԲՐԱՆՍԲՈՒՐԳ. — Լնտ. կենդանիների վար. հիվանդութ.

ՍԿՈՄՈՐՈԽՈՎ. — Լին ոգությունը հիվանդ կենդան.

ԿՐԱՎՉԵՆԿՈ. — Թե ինչպես կարելի յե գյուղում ելեքտրականություն անցկացնել.

Ա. Յ. Ա. Յ. ԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ՍԵՄԱՇԿՈ. — Թոքախտ.

ՍՊԵՐԱՆՍԿԻ. — Մոը այբբենաբանը.

ԲՐՈՒՆԵՐ. — Վեներական ախտեր.

ԳԻՆԾԲՈՒՐԳ. — Յերեխ. վարակիչ հիվանդութ.

ԽՈՐՀԾԻՑԵԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Լույս են տեսել.

ԵՍԻՊՅԱՎ. — Գյուղացիության պահանջները և խորհրդ.

ՃՐԱՎԻՐ:

ԿՐՈՒՊԱԿԱՅԱ. — Լենինի պատգ. ժող. լուս. մասին.

ՏՅՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ. — Աղջային հարցը և գպրոցը.

ԺԱՎՈՐՈԽԿՈՎ. — Հասարակագիտությունը I աստ. գպրոցում.

ԿՐԱՎՉԵՆԿՈ. — «Թե ինչպես Սաքոն կարմիր բանակային դարձավ» (մանկ. միջին և բարձր հաս.):

ՖՈԿՍ.—«Մինիստր մեկ ժամով» (մանկ.—միջ. և բարձր հաս.,  
պատկերազարդ):

ՈՐԼՈՎԵՅ.—«Ճամբարղություն այերուանով» (մանկակ., պատկեր-  
ազարդ, միջ. հասակ):

ՄԱՄԻՆ. ՍԻԲԻՐՅԱԿ.—«Մոծակի և արջի մասին» (մանկ., պատկե-  
րազարդ):

ԿՈՒՊՐԻՆ.—«Յերկրի խորքերում», (մանկ., պատկերազարդ, միջ.  
և բարձր հասակ):

ՌՈՒԴԵՆ. —Պիռներ, պահպանիր առողջությունդ.

ՈՐԼՈՎԵՅ.—Քիմիկոս կուզկան. (մանկ., պատկերազարդ, միջ. և  
բարձր հասակ):

ՆԵՎԵՐՈՎ.—Խնչպես եյին ապրում տիկնիկները (մանկական, պատ-  
կերազարդ):

Բ Ե Լ Լ Ե Տ Ը Ե Ս Ե Ա Ա

Լույս հն տեսել

Մ. ԳՈՐԿԻ. —Պատկերներ.

Ա. ՍԵՐՍՅԻՄՈՎԻՉ. —Պատկերներ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0383235

1200